ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Ֆինանսական վերահսկողության և լիցենզավորման դեպարտամենտ + 374 10 56 79 72, 04 33

05.03.2020

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին հայտնի տեղեկատվության համաձայն, ՀՀ տարածքում գործող որոշ առևտրային բանկեր (այսուհետ՝ Բանկեր) իրականացնում են ՀՀ տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների հետ համագործակցություն՝ Բանկերի մասնաճյուղերի/գլխամասերի տարածքներում տեղադրելով վճարահաշվարկային կազմակերպությանը պատկանող վճարային տերմինալներ: Ընդ որում համագործակցության շրջանակներում ծառայությունը փաստացի մատուցվում է վճարահաշվարկային կազմակերպության կողմից, իսկ իրականացված վճարումներից գանձվող միջնորդավճարներից Բանկերը ևս ստանում են եկամուտ: Դեռ ավելին՝ առկա են դեպքեր երբ տեղադրված վճարային տերմինալները կրում են Բանկի տարբերանշանները, ինչը կարող է ապակողմնորոշել հաճախորդներին:

Ուսումնասիրելով ներկայացված ծառայությունների առանձնահատկությունները, կենտրոնական բանկը հանգել է այն եզրակացության, որ այն Բանկերը, որոնք մատուցում են կամ նախատեսում են մատուցել վերը նշած ծառայությունները, անհրաժեշտ է ստանան «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրվող թույլտվությունը:

Թույլտվությունը ստացած Բանկը, տվյալ տեսակի համագործակցությունը իրականացնելիս պետք է առնվազն պահպանի հետևյալ պայմանները՝

- Վճարային տերմինալի ինտերֆեյսում կամ հաճախորդի համար հասանելի և տեսանելի այլ վայրում հստակ պետք է նշում կատարվի վճարային տերմինալների միջոցով կատարվող վճարումներից գանձվող միջնորդավճարների վերաբերյալ, ինչպես նաև հստակ պետք է նշված լինի, որ ծառայությունը մատուցվում է տվյալ վճարահաշվարկային կազմակերպության կողմից:

- Կողմերի միջև կնքված պայմանագրով հստակ պետք է կարգավորված լինի, որ հոգուտ բանկի կատարված վճարումներն իրականացվում են իրական ռեժիմով (օր.՝ վարկը մարվում է վճարման պահին):

Ֆինանսական վերահսկողության և

լիցենզավորման դեպարտամենտի տնօրեն՝ Դանիել Ազատյան

Կատարող՝ Զարուհի Ղազարյան

Հեռախոս՝ 59 25 42

Ֆինանսական վերահսկողության և լիցենզավորման դեպարտամենտ + 374 10 56 79 72, 04 33
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ